

ՄՈՆԹՐԵԱԼԻ ՄԱՔԿԻԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Մոնթրեալի McGill Համալսարանի կեդրոնական մատենադարանի ձեռագրատան մէջ պահուած են երկու հայերէն ձեռագիրներ, զորս տեսնելու եւ ուսումնասիրելու առիթը ունեցանք համալսարանին մէջ կրօնագիտութեան ուսանող Պրն. Յարութիւն Փալանճեանի միջոցաւ: Հարկ է մեր շնորհակալութիւնը յայտնել նաեւ Mrs. E. Lewisի, ձեռագրատան տեսչուհիին, որուն արտօնութեամբ կարելի եղաւ ցուցակադրել ձեռագիրները եւ այդ ցուցակադրումը հրատարակել: Mrs. Lewisի մօտ պահուած թղթակցութենէ մը յայտնի կ'ըլլար որ ցարդ ձեռագիրները Պրն. Փալանճեանէ զատ ոչ ոք չէր տեսած եւ թէ միայն անոնց zeroxով օրինակուած էջերը արամադրուած էին Dr. Michael Stoneի:

ԶԵՌԱԳԻՐ ԹԻԻ 2

Մամկուքեան Աւետարան Յիսուսի Քրիստոսի

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.—

Կազմ՝ տախտակեայ կաշեպատ, մաշած: Մեծութիւն՝ 14.5×10×4.5 սմ.: Նիւթ՝ թուղթ: Պահպանակի՝ 3 թերթ սկիզբը եւ 3 թերթ վերջը: Թերթի՝ 158, ներառեալ երկու դատարկ թերթեր: Հանգամանք՝ դոհացուցիչ: Գրութիւն՝ նոտրգրի: Բովանդակութիւն՝ երկու մաս. առաջին՝ քարոզք եւ աղօթք (պուհք Ա—ԺԴ). երկրորդ՝ Մանկութեան Աւետարան Յիսուսի՝ (ԺԵ—ԺԳ.): Յիշատակարան՝ ունի «երկրորդ կազմութեան» առիթով: Թուական՝ դարձեալ «երկրորդ կազմութեան» ՌՄԿԲ, Հայոց 1262 եւ Քրիստոսի 1813: Գրիչ՝ «երկրորդ կազմութեան» Շահնեան տիրացու Յակոբ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ.—

Սկիզբի պահպանակներուն յաջորդող առաջին էջին վրայ կայ հետադադիր գրիչին ձեռքով գրուած հետեւեալ յիշատակարանը.—

«Երկրորդ կազմութիւն սուրբ գիրքս որ գոշի մանկութեան աւետարան Յիսուսի Քրիստոսի ի թվին ՌՄԿԲ մարտի փին ի ձեռամբքն Շահնեան տիրացու Գրիգորն այլեւ կարդացողքն յիշեսցէ ըզննջեցեալս մէկիւ հայր մեղաւախս—ին շնորհիւ ամէն»:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ.—

Քառերեք զլիակարգումները կատարուած են մեր կողմէ, դիւրացը ներու համար մատենին բովանդակութեան մատուցումը:

Գլուխ Ա. Սկիզբէն թերթի պակաս են: Բովանդակութիւնն ապաշխարութեան խրատ: Թերթք 1—7ա:

Գլուխ Բ. Տեսիլ սրբոյն Գրիգորի հայոց սուրբ Լուսաւորչին, հարցմունք եւ պատասխանի հրէշտակապետին վասն հոգոցն արդարոց եւ մեղաւորաց: Թերթք 7բ—15ա, ներառեալ երկու դատարկ թերթք:

1 James, M. R., The Apocryphal New Testament, p. 83.

Գլուխ Գ. Տեսիլ աստուածածնին ի լեւոն ձիթենեաց, զոր յայտնեաց նմա հր-
բնչադատական վասն մեղաւորաց թէ որպէս տանջեն: Թերթք 15ր—
28ա:

Գլուխ Դ. Քարոզ վասն պաշտեան քրիստոսի եւ դատաստանի նորա: Թերթք
28ր—31ա:

Գլուխ Ե. Քարոզ վասն պաշտեանն Քրիստոսի: Այս է պատմութիւն վասն պա-
շտեանն Քրիստոսի յաւուր ուրաթուն, երկինք եւ երկիր շարժի,
տէրունական խաչն երեւի ի կողմն յարեւելից...: Թերթք 32ր—39ր:

Գլուխ Զ. Քարոզ վասն ողորմութեան: Որպէս անէ Դաւիթ մարդարէն, երանի
որ խորհի զաղքստն եւ զտնանկն...: Թերթք 40—46ա:

Գլուխ Է. Քարոզ վասն Նինուէացւոց: Յայնժամ նինուէացիքն բազում չարս
գործեցին եւ մեղօք ապականեցան կամէր տէր սատակել զնոսա...:
Թերթք 46—54ր:

Գլուխ Ը. Այս է պատմութիւն նախաստեղծին քանի ստեղծ տէր աստուած զա-
դամ եւ զլեւա մեծապէս փառօք եւ եղ ի մէջ զրախոյն: Թերթք 55—
68ր: Սոյն զլիւնն ներքեւ կանխարկուի հետեւեալ դէմքերուն եւ
դէպքերուն.— Աբրահամ, Մովսէս, մարդարէք, Յովհաննէս, Յի-
սուս, հրաշք Յիսուսի, Երուսաղէմ մուտք Տեառն, վերջին ընթրիք,
Յարութիւն, Լմմառա, Թերահաւատութիւն Թոմասոս, Համբար-
ձում եւ Հոգեգալուստ:

Գլուխ Թ. Այս է պատմութիւն Կայենայ եւ Աբենայ: Թերթք 68ր—74ր:

Գլուխ Ժ. Վասն արեւտեացն Սէթայ: Եւ քաղցրացաւ Տէր ի վերայ աղամայ եւ
առաքեաց զհրեշտակ իւր առ աղամ եւ ասէ...: Թերթք 74ր—79ա:

Գլուխ ԺԱ. Քարոզ վասն աղօթից, Գրիգորի ասացեալ: Այսպէս անէ տէրն մեր
Յիսուս Քրիստոս արթուն կացէք եւ յամենայն ժամ աղօթն արա-
րէք մի անկանիցիք ի փորձութիւն, քանզի յաղօթքն դուռն է յերկ-
նից եւ ճանապարհ արքայութեան...: Թերթք 79ա—86ա:

Գլուխ ԺԲ. Ովհաննու Մանդակունեցուն ասացեալ վասն անչաճ մեղացն եւ
հայճոյրացն: Երկերուք, երկերուք, զարճերեցէք եւ սառանեցէք,
վասն անչաճ մեղացն...: Թերթք 86ա—91ա: Այս խրատը հաւանա-
բար վերադրուած է Մանդակունիին, քանի որ բովանդակութիւնն
ու ոճը եւ մանաւանդ բառաթերքը շեն հասնիր որակի եւ մտքի այն
բարձրութեան որուն հասած են Մանդակունույ ծառերը:

Գլուխ ԺԳ. Ոտանաւոր. (ա) Աղօթք պահպանութեան ի Առաքել վարդապետի:
Տէր եւ փրկիչ Յիսուս աստուած, հօր ճառապայթ եւ լոյս փառաց
...: 13 տունեք բաղկացած բանաստեղծութիւն մը, հեղինակի ան-
ունն սկզբնատառերով հիւստեած —Տ էր Առաքեալ Ասն—:
(բ) Դարձեալ ոտանաւոր նոյն Տէր Առաքեալէն: Տարբմամբ ձայնիւ
հառաչանաց, առ քեզ դռնմք Յիսուս Աստուած, տուր պահապան
դասք հրեշտակաց...: 14 տունեք բաղկացած, հեղինակի անունն
սկզբնատառերով: Թերթք 91ա—93ր:

Գլուխ ԺԴ. Յաղագս հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ զնալ նոցա փախստա-
կան յեղիպոսո, յանօրէն ամբարշտէն հերոզիկայ, զի մի սպանցէ
զմահուին: Առտ նկարագրուի Յիսուսի եւ ծնողաց փախուստը Ե-
ղիպոսո, երբ մանուկը Լրկու տարու եւ չորս ամսու էր, ուր եւ կը
զտնուէին Աղոյսնի կուռքը եւ տաճարը: Թերթք 93—98:

Գլուխ ԺԵ. Յաղագս վասն Յիսուսի խորատակելոյ զլոսոց պատկերն ապոլոնի.
եւ զմեհեանս զիւսցն եւ բաղմութիւն մարդկան որ մեռան եւ յա-
րութիւն որ եղեւ իսկ: Եւ Յիսուս յարուցեալ զնաց անդր եւ Լմուս

ի տաճարն կոոց եւ հայէր շուրջ զնոքօք տեսանել զվայելչութիւն շինուածոցն... Աստ կը նկարագրուի Յիսուս երեք տարու եւ չորս ամսու, երբ քաղաքին մէջ մեծ տօն պիտի սարքուէր նուիրուած Ապոլոնի: Իսկ մանուկն Յիսուս ելեալ զնաց ծածուկ եւ նստաւ ուր կուռքն էին: Կործանումն կոոց եւ քաղաքի: Եւ Յիսուս զնացեալ լուսթեամբ առ մայր իւր նստէր յանկիւնս տանն, եւ նոցա կայեալ զՅովսէփ կացուցին առաջի ատենին... զի կախարհութեամբ իւրիք կորուսիք զքաղաքս զայս: Թերթք 99—108ր:

Գլուխ ԺԶ. Յաղագս վարձեալ վասն հրեշտակին դառնալոյ Յովսեփայ զնայ նոցա յերկիրն իսրայէլի եւ քնակել նոցա յաշխարհին զայրիւնացուց ի քաղաքն Նազարէթ: Թերթք 108ր—117ա:

Գլուխ ԺԷ. Յաղագս վասն ելանելոյ նոցա յԵղիպտոսն եւ զալ ի կողմանս հարաւոյ յաշխարհս արարելոյ, եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս եւ մահուան որ եղեւ յարութիւն մեռելոց: Մեկնում յերկիրն ասորոց ի քաղաք մի որում անուն էր շաիւ պրաւ, եւ Յիսուս էր ամաց հինգ եւ ամսոց երեք: Թերթք 117ա—125ա:

Գլուխ ԺԸ. Յաղագս վասն փախելոյ նոցա անտի եւ զնալ նոցա յերկիրն ասորեստանեայ, ի քաղաք մի որ կոչի մաթիւս. եւ Յիսուս էր ամաց վեց: Թերթք 125ա—127ա:

Գլուխ ԺԹ. Յաղագս վասն երթալոյ նոցա յերկիրն քանանու եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս, եւ մահուան որ եղեւ յարութիւն մեռելոց զոր արար: Թերթք 127ա—129ր:

Գլուխ Ի. Յաղագս վասն Կնալոյ նոցա յերկիրն Իսրայէլի հ դործ տղայութեան զոր առնէր Յիսուս, եւ տալ զնա յուսումն զպրութեան հ մահուանն որ եղեւ իսկ յարութիւն որդոյ Թաղաւորին: Թերթք 129ր—136ա:

Գլուխ ԻԱ. Յաղագս վասն գնալոյ նոցա ի քաղաքն տապարեայ, տալ զնա ի սորուստ ներկութեան. եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս, եւ սքանչելեացն զոր արար Յիսուս: Թերթք 129ր—141ր:

Գլուխ ԻԲ. Յաղագս վասն երթալոյ նոցա յաւրեմայ քաղաքի. եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս եւ մահուան որ եւ իսկ յարութիւն արար Յիսուս: Թերթք 142—149ա:

Գլուխ ԻԳ. Յաղագս վասն երկմտելոյ նոցա զնալ արտեսան յերինն, եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս ընդ մանկուսն: Թերթք 149ա—158:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.—

Ձեռագիրս որեւէ լուսանցագրով չունի: Արուեստի բարձր դործ մը չի ներկայացնէր: Վերնագրերու սկզբնատառերը միայն թռչնադիր են կարմիրով եւ կապույտով, զրիչի հասարակ ճաշակով: Ձեռագիրս կարեւորութիւն կը կայանայ անոր բովանդակութիւնը, յատկապէս Յիսուսի մանկութեան վերաբերեալ մասը. քաղաքատեսիլն մէջ ցարդ ծանօթ օտար լեզուով հրատարակուած պարականոն (Apocryphal) աւետարաններուն հետ: Միացեալ քարոզիչներն ու ագոթքները կարեւոր նորութեամբ մը չեն ներկայանար մեղի, երբ զանոնք ուղեմբ քաղաքատեղ ցարդ մեղի ծանօթ հայ ծիսարանի կամ ժամագրոց հետ: Այսուհանդերձ հետաքրքրական պիտի ըլլայ ձեռագրիս բովանդակութեան զոնէ մտանակի հրատարակութիւնը, քանի որ ան կը պարունակէ, թէ իսկ ոչ-վաւերական, պատմութիւնը Յիսուսի մանկութեան, որու մասին առ հասարակ լուսթիւն կը տիրէ:

ՋԱԿԵՆ Մ. ՎՐԴ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մոնթրէալ, Փետրուար 1972